

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- ✓ 2016թ. մայիսի 11-12-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը մասնակցել են ք. Լվովում (Ուկրաինա) կայացած «Տնտեսական ինտեգրում և կոնվերգենցիա ԵՄ քաղաքականությունների հետ» Պլատֆորմ-2-ի ներքո կայանալիք Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի և Ընդհանուր վիճակագրական օրենքի վերաբերյալ Արևելյան գործընկերության վիճակագրության Պանելի երրորդ հանդիպմանը,
- ✓ 2016թ. մայիսի 17-20-ը ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Գևորգյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած Միգրացիայի վիճակագրության վերաբերյալ աշխատանքային հանդիպմանը և նստաշրջանին,
- ✓ 2016թ. մայիսի 17-20-ը ՀՀ ԱՎԾ մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած Ազգային հաշիվների փորձագետների խմբի հանդիպմանը,
- ✓ 2016թ. մայիսի 30-ից հունիսի 3-ը ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Գևորգյանը և ՀՀ ԱՎԾ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել են ք. Վիլնյուսում (Լիտվա) կայացած «Գենդերային վիճակագրություն» խորագրով աշխատաժողովին,
- ✓ 2016թ. մայիսի 31-ից հունիսի 3-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը և ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել են ք. Մադրիդում (Իսպանիա) կայացած «Որակի կառավարումը վիճակագրությունում՝ իրականացման ճանապարհը» խորագրով աշխատանքային հանդիպմանը և «Որակը պաշտոնական վիճակագրությունում» խորագրով Եվրոպական կոնֆերանսին,
- ✓ 2016թ. հունիսի 2-3-ը ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կոյունջյանը մասնակցել է ք. Լյուքսեմբուրգում (Լյուքսեմբուրգ) կայացած «Բնակչության վիճակագրություն» խորագրով աշխատանքային խմբի հանդիպմանը,
- ✓ 2016թ. հունիսի 6-7-ը ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Բաթումիում (Վրաստան) կայացած Եվրոպայի շրջակա միջավայրի միասնական տեղեկատվական համակարգի զարգացմանը նվիրված խորհրդակցությանը և հունիսի 8-10-ը՝ Բնապահպանության նախարարների «Շրջակա միջավայր Եվրոպայի համար» խորագրով 8-րդ խորհրդաժողովին,

- ✓ 2016թ. հունիսի 6-8-ը ՀՀ ԱՎԾ աշխատանքի վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Ս. Զեյնալյանը մասնակցել է ք. Բանգկոկում (Թաիլանդ) կայացած «Գենդերային հավասարությունը և կանանց հզորացումը բարելավելու համար վիճակագրության ամրապնդումը» խորագրով միջտարածաշրջանային աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2016թ. հունիսի 6-10-ը ՀՀ ՎՊԽ անդամ Վ. Դավթյանը, ՀՀ ԱՎԾ տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ Ա. Մարտիրոսյանը, տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ Կ. Եսայանը և նույն վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի գլխավոր մասնագետ Ս. Շահգեղյանը մասնակցել են ք. Աստանայում (Ղազախստան) կայացած «Դեվինֆո 6.0 – Օգտվող և կառավարող» խորագրով դասընթացին,
- ✓ 2016թ. հունիսի 7-10-ը ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Գևորգյանը, ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետներ Ա. Հակոբյանը և Ա. Գրիգորյանը մասնակցել են ք. Հելսինկիում (Ֆինլանդիա) կայացած «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – II փուլ» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Ինովացիայի վիճակագրություն» բաղադրիչի շրջանակում կազմակերպված հանդիպումներին,
- ✓ 2016թ. հունիսի 15-16-ը ՀՀ ԱՎԾ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ք. Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած «Աշխատանքի վարձատրության վիճակագրության կատարելագործումը և աշխատանքի գինը/աշխատաժամանակի վիճակագրական չափումը» խորագրով խորհրդակցությանը,
- ✓ 2016թ. հունիսի 21-22-ը ՀՀ ԱՎԾ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ք. Մաստրիխտում (Նիդերլանդներ) կայացած Արևելյան համագործակցության Պլատֆորմ-2 ծրագրի շրջանակում կազմակերպված «Որակավորված մասնագետների առաջարկի և պահանջարկի համապատասխանեցման, կանխատեսման մոտեցումները. ԵՄ և Արևելյան գործընկերության տարածաշրջանի փորձը՝ աշխատանքի շուկայի հետազոտության արդյունքների և մասնագիտական հմտությունների դինամիկայի կիրառմամբ» խորագրով չորրորդ աշխատաժողովին,

- ✓ 2016թ. հունիսի 22-23-ը ՀՀ ԱՎԾ գյուղատնտեսության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Վ. Ճաղարյանը մասնակցել է ք. Ալմաթիում (Ղազախստանի Հանրապետություն) կայացած «Գենդերային վիճակագրությունը գյուղատնտեսության և գյուղի զարգացման ոլորտում» խորագրով ռեգիոնալ սեմինարին,
- ✓ 2016թ. հունիսի 23-24-ը ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կոյունջյանը մասնակցել է ք. Մինսկում (Բելառուսի Հանրապետություն) կայացած «Ակտիվ ծերացմանն առնչվող վիճակագրական ցուցանիշներում առկա հիմնախնդիրների վերացում» խորագրով աշխատաժողովին,
- ✓ 2016թ. հունիսի 28-29-ը ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած Շրջակա միջավայրի մշտադիտարկման և գնահատման աշխատանքային խմբի 18-րդ նստաշրջանին և հունիսի 30-ից հուլիսի 1-ը՝ Բնապահպանական վիճակագրության և ցուցանիշների միասնական նպատակային խմբի 11-րդ նստաշրջանին,
- ✓ 2016թ. հունիսի 28-30-ը ՀՀ ԱՎԾ տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան մասնակցել է ք. Նյու Յորքում (ԱՄՆ) կայացած Ժամանակի օգտագործման վիճակագրության համար գործունեության միջազգային դասակարգչի (ICATUS) վերանայման համար փորձագետների խմբի հանդիպմանը,
- ✓ 2016թ. հունիսի 28-ից հուլիսի 1-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը և ՀՀ ԱՎԾ վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ն. Մուշեղյանը մասնակցել են ք. Կոպենհագենում (Դանիա) կայացած «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – II փուլ» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Վիճակագրական տեղեկատվության տարածման համակարգ» բաղադրիչի ներքո կազմակերպված «Վիճակագրության տարածումը, հաղորդակցությունը և որակը» խորագրով աշխատանքային հանդիպմանը: